

ՆԵՐՀԱԿԱՆԻՇՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ

ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏՅԱՆ^{*ID}

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Ներհականիշությունը լեզվական երևույթ է, երբ միևնույն բառի մեկ իմաստը հակադրվում է մյուս իմաստին: Այս երևույթը տարբեր ծավալներով առկա է գրեթե բոլոր լեզուներում, սակայն դրա առաջացման և զարգացման մասին հստակ պատկերացում չկա: Ներհականիշության մասին ուսումնասիրություններ, նաև զուգադրական վերլուծություններ են կատարվել՝ հիմք ընդունելով միևնույն լեզվաընտանիքի լեզուների, մեկ լեզվի կամ էլ տարբեր լեզուների նյութը: Լեզվաբանության մեջ ներհականիշների ըմբռնման, նկարագրման, դասակարգման մասին միասնական մոտեցում դեռևս չի ձևավորվել: Հայերենում ներհականիշության դրսևորումներն ամբողջապես չեն ուսումնասիրվել, և այս հոդվածը փորձ է լրացնելու այդ բացը: Հոդվածում նախ տրվում են «ներհականիշություն» երևույթի բնորոշումները լեզվաբանական գրականության մեջ, ապա քանակական և նկարագրական մեթոդների միջոցով տարբեր խմբերում են դաստասովում ներհականիշություն ունեցող բառերը, որոնք քաղվել են Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ից: Հոդվածը կարևոր է ոչ միայն այն առումով, որ առաջին անգամ հայոց լեզվի նյութի հիման վրա առանձնացվում են ներհականիշություն ունեցող բառերը, այլ նաև այն բանով, որ այդ նյութը հետազայում կարող է օգտագործվել հայերենի դասավանդման, բառանագրության, հայերենի և օտար լեզուների զուգադրական ուսումնասիրությունների ժամանակ:

Բանալի բառեր – *ներհականիշություն, կոնտրոնիմ, բառարանագրություն, իմաստային փոփոխություն, հակադրություն*

*** Մկրտիչ Մկրտչյան** – ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի Ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի կրտսեր գիտաշխատող, Բոյուսովի անվան պետական համալսարանի դասախոս, ասպիրանտ:

Мкртыч Мкртчян – младший научный сотрудник Института языка им. Гр. Ачаряна НАН РА, отделение общего и сравнительного языкознания; преподаватель, аспирант в Государственном университете имени В. Я. Брюсова.

Mkrtich Mkrtchyan – Junior Researcher at NAS RA Institute of Language after H. Acharyan, the Department of General and Comparative Linguistics, Lecturer, PhD Student at Brusov State University.

Էլ. փոստ՝ mkrtchyan09@gmail.com <https://orcid.org/0000-0002-3956-6533>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 26.03.2025

Գրախոսվել է՝ 27.03.2025

Հաստատվել է՝ 02.06.2025

© The Author(s) 2025

Ներածություն

Ներհականիշությունը լեզվական երևույթ է, երբ միևնույն բառի իմաստներից մեկը հակադրվում է նրա մեկ այլ իմաստին: Ներհականիշությունը լեզվաբանական գրականության մեջ ստացել է տարատեսակ անվանումներ. այն հայտնի է իբրև «ներհականիշություն», «կոնտրոնիմներ», «ավտոանտոնիմներ», «էնանտիոսեմիա», «Յանուս բառեր» և այլն:

Ներհականիշության բնութագրումները շատ են, սակայն դրա առաջացման աղբյուրները հստակ չեն, բայց կարելի է ենթադրել, որ այդ աղբյուրները կարող են լինել իմաստային տեղաշարժերը, համատեքստն ու մշակութային գործոնը: Այս երևույթը բնորոշ է համարյա թե բոլոր լեզուներին, և այդ ուղղությամբ կատարվել են հետազոտություններ ինչպես մեկ լեզվի (Кравцова, 2006), երկու լեզուների (Авдеева, и др., 2019), այնպես էլ միևնույն լեզվաընտանիքին պատկանող տարբեր լեզուների նյութի հիման վրա (Shmelev, 2016):

Հարկ է նշել, որ հայերենի բառապաշարին վերաբերող ծավալուն ուսումնասիրություններ չկան, և այս հոդվածն ուրույն փորձ է լրացնելու այդ բացը:

Ներհականիշության բնորոշումը լեզվաբանության մեջ

Ներհականիշությունն ուսումնասիրության առարկա է դարձել 19-րդ դարում. երկու գիտնականներ՝ Կ. Աբելը (1843–1906) Գերմանիայում և Վ. Շերցելը (1827–1906) Ռուսաստանում 1884 թ. միաժամանակ աշխատություններ են հրատարակում, որոնցում քննության են առնվում բառերի հակադիր իմաստները: Ե. Վելմեզովան (2007:170) նշում է, որ ռուսական մասնագիտական գրականության մեջ երբեք չեն անդրադարձել խնդրո առարկայի վերաբերյալ արևմտյան գիտնականների աշխատություններին: Խոսքը Կ. Աբելի, Զ. Ֆրոյդի ու Է. Բենվենիստի մասին է, ընդ որում՝ համաձայն Ֆրոյդի՝ ներհականիշությունը առաջանում, զարգանում է քողարկված կերպով, և ըստ Ռոզետ Լարյու–Տոնդերի՝ «հետաքրքիր կլինեք ուսումնասիրել դրա դրսևորումները, քանի որ այն սերտորեն կապված է խոսքային արվեստի հետ» (2009: 4):

«Ներհականիշություն» երևույթը «կռվախնձոր» է դարձել հոգեվերլուծաբանների ու լեզվաբանների միջև. Բենվենիստն իր «Ընդհանուր լեզվաբանության խնդիրներ» երկհատորյա աշխատության մեկ գլուխ նվիրում է Ֆրոյդի լեզվի գործառնության վերլուծություններին (2023:109–126): Բենվենիստը քննադատում էր Ֆրոյդին, որ նա հակված էր չափից դուրս պարզեցնելու և ընդհանրացնելու լեզվի առանձնահատկությունները, որպեսզի դրանք համապատասխանեին իր հոգեվերլուծական համակարգին:

«Ներհականիշություն» երևույթը լեզվաբանական տեսական աշխատություններում համարվում է հականիշության կամ բազմիմաստության տարատեսակ կամ էլ բազմիմաստությանն ու հականիշությանը կից երևույթ, քանի որ «ներհականիշ լեզվական երևույթները բնութագրվում են միևնույն արտահայտության պլանի, բովանդակության երկու պլանի և հականիշային բնույթի

հարաբերության առկայությամբ» (Кравцова, 2006: 82): Ներհականիշությունը բնութագրել են նաև որպես «հականիշության և համանունության փոխհարաբերության եզակի հանդիպող դեպքերից մեկը» (Горелов, 1986: 227) կամ զուտ համանունության տարատեսակ (Виноградов, 1975: 302–303) կամ էլ ներբառային հականիշություն (Новиков, 1982: 251): Ռուլան Բարտը (1982: 95) ներհականիշությունը որակում է որպես «հակասական նշանակիչ» (un-signifiant contradictoire), իսկ ֆրանսիացի լեզվաբան Կլոդ Աժենժեն այն անվանում է «երկու հակառակ / հակադիր իմաստների համատեղ ներկայություն» (co-présence de deux sens contraires) (1985: 154): Օքսֆորդի «Լեզվաբանական համառոտ բառարանը» այսպես է բացատրում ներհականիշությունը. «Բազմիմաստության տեսակ, երբ մեկ իմաստն ինչ-որ առումով մյուս իմաստի հակառակն է» (a case of polysemy in which one sense is in some respect the opposite of another) (2014: 123):

«Ներհականիշություն» երևույթը բազմակողմանիորեն ուսումնասիրվել է ռուսերենի նյութի հիման վրա՝ սլավոնական այլ լեզուների համեմատությամբ, այն էլ՝ բառային մակարդակում (Абрамян, Каджберуни, 2001: 79): Ընդ որում, «Պատանի բանասերի հանրագիտարանում» ռուսաց լեզվում ներհականիշության առաջացման 2 պատճառ է նշվում. 1. տարբեր ոլորտներում բառի երկար գործածությունը և 2. բառի հեզնական օգտագործումը (1984: 336): Իսկ ռուսերենի դարձվածաբանական միավորների ներհականիշության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այն շատ ավելի բարդ երևույթ է, քան բառային մակարդակինը. դա պայմանավորված է այն բանով, որ «դարձվածաբանական միավորներն իմաստային և կառուցվածքային առումով յուրահատուկ են, քան առանձին բառերը» (Никольникова и др., 2021: 511):

Հայ լեզվաբանական գրականության մեջ «ներհականիշություն» երևույթին անդրադարձները հազվադեպ են. Ա. Նազարյանն իր «Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն–ռուսերեն–հայերեն ուսումնական բառարանում» «épan-tiosémie» ֆրանսերեն եզրույթի համար տալիս է հետևյալ թարգմանությունն ու բացատրությունը՝ «հակիմաստություն, ներհականիշություն, իմաստների բևեռացում (բառի կամ բառակապակցության հակադիր իմաստներ արտահայտելու ընդունակություն)» (1993: 176): Ռ. Շալունցը առաջիններից է անդրադարձել խնդրին՝ անվանելով այն «ներբառային հականշություն» (1979: 142), իսկ Ալ. Մարգարյանը պնդում է, որ «ներհականշությունն առանձնապես հատուկ չէ հայերենին» (1987: 59): Մյուս անդրադարձը կարելի է գտնել Կ. Աբրահամյանի և Հ. Քաջբերունու «Էնանտիոսեմիա. ակունքներ, ուսումնասիրության հիմնախնդիրներ» (2001), Հ. Քաջբերունու և Թ. Հակոբյանի «Ներհականիշության խնդրի շուրջ» (2016) հոդվածներում:

Պետք է նշել, որ բառի իմաստին հակադիր իմաստ կարելի է արտահայտել նաև ներակայման միջոցով, սակայն վերջինիս դեպքում իմաստն ավելի շատ

ենթադրվում և ապակողավորվում է հասցեատիրոջ կողմից: Ավելին, ներակայումը գործաբանական երևույթ է, իսկ ներհականիշությունը՝ իմաստաբանական¹:

Մեթոդաբանություն

Հոդվածում գործածվել են հետևյալ մեթոդները. նկարագրական մեթոդի միջոցով նկարագրվում է «ներհականիշություն» երևույթը, իսկ քանակական մեթոդի օգնությամբ նշվում է, թե ներհականիշության քանի տեսակ կա հայերենում: Հոդվածի ուսումնասիրության փաստական նյութը քաղված է Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից». հավաքվել է ընդհանուր առմամբ 161 գլխաբառ, որոնք դասոչակվում են մի քանի խմբերում: Ընդ որում, երբեմն իմաստների համարները տրվում են ըստ բառարանի, երբ բառի իմաստները շատ են, իսկ հակադիր իմաստները՝ իրարից հեռու, և արդյունքներին ծանոթանալը կարող է խնդրահարույց լինել ընթերցողի համար: Մյուս դեպքերում, երբ իմաստները երկուսն են կամ էլ իրար մոտ են տրված բառաբանում, դրանք ներկայացվում են «և» շաղկապով՝ առանց համարակալելու:

Արդյունքներ

Ներհականիշների դասակարգման տարբեր մոտեցումներ կան՝ կախված այն բանից, թե ինչպես է ըմբռնվում ներհականիշը՝ լայն կամ նեղ իմաստներով: Այս հոդվածում նկարագրվում են ներհականիշության լայն դրսևորումները և, ըստ այդմ, առանձնացվել են *լրիվ, մասնակի հակադրություն, փոխանություն, ինչպես նաև կին – տղամարդ, հոգեկան – ֆիզիկական հակադրություն* և *հեզնանք ու արհամարհանք* արտահայտող բառեր: Այս խմբերում ընդգրկված որոշ բառեր ունեն մի քանի ներհականիշ իմաստներ, որոնք տարբեր իմաստներով կարելի էր զետեղել տարբեր խմբերում, սակայն ընտրվել է մեկ խումբ՝ հաշվի առնելով որևէ իմաստի առավել գործածական լինելը:

Լրիվ հակադրություն

Այս խմբում ներառվել են այն բառերը, որոնց իմաստներից գոնե մեկը բացահայտորեն հակադիր է մյուս իմաստ(ներ)ին: Կան լրիվ հակադրություն արտահայտող 30 բառ: Դրանցից են, օր.՝

Ախոյան, գ. 1. Թշնամի, հակառակորդ: 2. Սրցակից: 4. (արևմտ.): Համախոհ, կողմնակից, պաշտպան:

Աղվեսանալ, չբ. խորամանկանալ և փխբ. իմաստով՝ խեղճանալ:

Դեղ գ., 1. Հիվանդությունը բուժելու կամ կանխելու համար գործածվող նյութ, բուժանյութ: 6. (ժղ.): Թույն:

Ժառանգել, նբ. 2. Ժառանգություն ստանալ: 7. Ժառանգություն թողնել:

¹ Հայերենում ներակայման դրսևորման դեպքերի համար տե՛ս **Գևոյան, Մ.** Ներակայումը արդի հայերենում (ատենախոսություն), Եր., 2024:

Կայել, չբ. 17. Ընդհարվել, բախվել, վիճել, կռվել: 22. Հավանել, սիրել, սեր տածել:

Փառ (1), ի, գ. 6-րդ իմաստով այն նշանակում է որևէ գոյացություն, իսկ 7-րդ իմաստով՝ որպես ածական նշանակում է անբիծ, մաքուր, հստակ: *Բայց փառ սպիտակությունը խաժամուժվում է* (Հ. Քոչար):

Ներհականիշության երկու դեպք է հանդիպել իբրև բնական և ոչ բնական/արհեստական հակադրություն, դրանք են՝ **ամբոց**, գ., բնական ամուր տեղ, ամրություն և արհեստական կերպով ամրացված դիրք կամ ռազմական կառուցվածք թշնամու հարձակումներից պաշտպանվելու համար, բերդ ամրություն; **անոտ**, ած. ոտք չունեցող, բնականորեն ոտքից զուրկ և ոտքից զրկված, ոտք(եր)ը կտրած:

Ներհականիշություն են դրսևորում նաև ձայնարկությունները. դրանց մի իմաստը ամբողջովին հակասում է մյուսին, օր.՝ **սահ**՝ վշտի՝ ցավի բացականչություն և ուրախության բացականչություն, **դե**՝ խրախուսանք և սաստում, նախազգուշացում, **ռհ**՝ վշտի՝ տխրության բացականչություն և ուրախության բացականչություն, **վայ**՝ ցավի, ողբի բացականչություն և ուրախության բացականչություն:

Մասնակի հակադրություն

Այս խմբում ներկայացված են այն բառերը, որոնք մասնակիորեն են հակադրվում մյուս իմաստին, այսինքն՝ այդ հակադրությունը ենթադրվում է, կամ էլ որոշ առումով հակասում է բառի մյուս իմաստին: Այս խմբում ներառվել է 34 բառ: Ահա դրանցից մի քանիսը.

Ամուրի, 1. Դեռևս չամուսնացած չափահաս մարդ կամ կին: 2. Ամուսնաթող տղամարդ կամ կին: 3. Տղամարդ, որի կինը վախճանվել է:

Անամաչ, ած. չամաչող, անամոթ և որ ամաչելու առիթ՝ պատճառ չունի:

Անկշռելի ած. ոչ կշռելի, քաշ՝ կշիռ չունեցող և չափազանց թեթև, զգալի քաշից զուրկ:

Գաղտնաբանել, չբ. որևէ բան գաղտնի պահել՝ ոչ ոքի չհայտնել և մեկի հետ գաղտնի բաներ խոսել, մեկի հետ խոսել այնպես, որ ուրիշները չլսեն:

Լճաբնակ, ած. լճի մեջ բնակվող՝ ապրող և լճափին բնակվող՝ ապրող:

Կծիկ, գ. 6. (զվռ.): Կուչ եկած՝ սմբած պառավ: 8. (ծծկբ.): Աղջիկ:

Վերաշարադրել, նբ. 1. Նորից շարադրել: 2. Շարադրվածը վերամշակել՝ բարեփոխել: 3. Որևէ պատմություն՝ ստեղծագործություն ինքնուրույն կերպով վերապատմել՝ շարադրել:

Փոխանունություն

Երբեմն նույն իրավիճակի երկու մասնակիցները համարվում են հակադիրներ, քանի որ գործողության նկարագրությունը մասնակիցներից մեկի տեսանկյունից ընկալվում է որպես «հակադիր» մյուս մասնակցի համար

(Shmelev, 2016: 76): Այս խմբի մեջ են մտնում նաև այն բառերը, որոնց մի իմաստը նկարագրում է օբյեկտը, երևույթը կամ այդ օբյեկտի, երևույթի մի մասը: Այս խմբի մեջ ընդգրկվել է 73 բառ. դրանցից մի քանիսը ներկայացնենք ստորև:

Ապաստանել, չբ. 1. Որևէ տեղում պատսպարվել: 3. Պատսպարվել, ապաստան մտնել: 5. նբ. (հզվդպ.): Ապաստան տալ, պատսպարել:

Ահաբեկ, ած. մկ. սարսափի ենթարկված և ահ՝ սարսափ տարածող՝ առաջացնող:

Աղվեսահաչ, գ. աղվեսի հաչոց և շան հաչոցը աղվեսի վրա:

Անձրևոտել, (նբ.) անձրևով թրջել և (չբ.) անձրևից թրջվել:

Զույգ, գ. 1. Որևէ բանի երկու հատը միասին վերցրած: 5. Զույգի յուրաքանչյուր միավորը:

Խեղդ արմատով – **գայլախեղդ**, ած. գայլի խեղդած և գայլ խեղդող; **գազանախեղդ**, ած. գազան խեղդող և գազանի խեղդած:

Խղճահար, ած. խղճահարություն զգացող, խղճահարությամբ և խղճահարված, խղճահարություն արտահայտող:

Քարասպան, ած. Քարով սպանած՝ սպանված:

Օձասուն, ած. օձերով սնվող՝ կերակրվող և օձերի սնունդ դարձած:

Բավականին արգասաբեր են **-ծին** վերջնաբաղադրիչով բառերը (39 հ.). օր.՝ **սկզբնածին**, ած. սկզբում՝ առաջինը ծնված, անդրանիկ, առաջնեկ և առաջին անգամ ծնող՝ ծննդաբերող; **հերոսածին**, ած. 1. Հերոս ծնող՝ ստեղծող: Հերոսածին դարաշրջան: 2. Հերոսից ծնված: Հերոսածին գավակ: 3. Հերոսի (հերոսների) ստեղծած: Հերոսածին հաղթանակ:

Սակայն **-ծին** վերջնաբաղադրիչով **ոչ բոլոր բառերն** են մաս կազմում այս հակադրության, օր.՝ **ձվածին**, ած. ձվի միջոցով սերունդ արտադրող:

Հանդիպում են նաև **կեր** արմատով մի շարք բառեր, որոնք ունեն իրար հակադիր իմաստներ՝ **գազանակեր**, ած. գազանից կերված, գազանակուր և գազան ուտող; **գայլակեր**, ած. գայլից կերված և գայլ ուտող; **հավակեր**, ած. հավ ուտող և հավի կեր դարձած, հավերից քծծված՝ փչացած; **մրջնակեր**, ած. մրջյուններից կերված և մրջյուն ուտող; **որդնակեր**, ած. որդերով կերակրվող, որդեր ուտող և որդերի կերած, որդը կերած: Սակայն **կեր** արմատով **ոչ բոլոր բառերն** ունեն իրար հակադիր կամ հակասող իմաստներ, օր.՝ **ձվակեր**՝ ձու ուտող և սեփական ձուն ուտող:

Կին–տղամարդ հակադրություն

Այս խմբում ներառվել են բառեր, որոնք ներկայացնում են կին և տղամարդ հակադրության վերաբերյալ իմաստներ՝ կանանց և տղամարդու հագուստ, կին և կնաբարո տղամարդ, ամուսնացած/չամուսնացած լինելը, տարիք և այլն: Ուսումնասիրության արդյունքում գտնվել է 13 բառ, ահա դրանցից մի քանիսը.

Աղջիկ գ. 1. Իգական սեռի երեխա: 2. Իգական սեռի չամուսնացած երիտասարդ: 3. Իգական սեռի զավակ՝ անկախ հասակից և ընտանեկան կարգավիճակից: 4. Կույս: 7. փխբ. (ժղ.) Թույլ՝ անզոր անհամարձակ տղամարդ: 10. Իգական սեռին պատկանող:

Որդի, գ. ծնողների արու զավակ և ընդհանրապես զավակ:

Սեղեխ, գ. 1. (հնգ.): Օտար կնոջ հետ ապօրինի սեռական կապի մեջ մտնող տղամարդ: 2. Ապօրինի կապի մեջ մտնող կին, սիրուհի, տարփածու:

Սրտակեր, ած. 4. փխբ. Կանանց մեջ մեծ հաջողություն ունեցող՝ նրանց սրտերը գրավող (տղամարդ): 5. փխբ. Տղամարդկանց տանջող՝ սիրո տառապանքների մատնող (կին):

Վարդ, գ. 7. փխբ. Մատաղ, ջահել, երիտասարդ: *Տղա մը վարդ (Ջ. Գալեմ-բյարյան)*: 8. փխբ. Վարդի նման, շատ գեղեցիկ: *Ասավ, բերավ շարան-շարան վարդ աղջիկներ, կանայք Սասման (Հ. Թումանյան)*:

Տղա, գ. 1. Արական սեռի երեխա, մանչ: 2. (արևմտ.): Ընդհանրապես երեխա՝ մանչ թե աղջիկ:

Այստեղ տեղին է նշել, որ **տղաբեր** բառն ունի «ծննդկան» իմաստը և քիչ գործածական է արևելահայերենում, գործածության ժամանակ էլ նկատի ունեն, որ ծննդկանն արու զավակի է սպասում:

Հոգեկան-ֆիզիկական հակադրություն

Հոգեկան և ֆիզիկական հակադրությունը երբեմն չի ընկալվում որպես ներհականիշության տարատեսակ՝ համարվելով ներհականիշության «լայն» դրսևորում (Shmelev, 2016), սակայն այն կարևոր է ներհականիշության դրսևորումները ներկայացնելու համար: Այս խմբում գետեղվել է 4 բառ:

Հաշմ, ած. 1. Մարմնի որևէ անդամի վնասվածք կամ արատ ունեցող (խեղանդամ, կաղ, անդամալույծ, կույր են): 3. փխբ. Մտավոր պակասություն ունեցող, մտքով կույր, ապուշ:

Վառել, նբ. 12. Խարույկի վրա այրել (որպես պատիժ): 14. փխբ. Այրող ցավ պատճառել, խայթելով՝ խոցելով՝ ծակելով սուր ցավ առաջացնել՝ պատճառել: 17. փխբ. Հոգեկան ցավ՝ տառապանք պատճառել: 18. փխբ. Որևէ զգացմունքով համակել՝ տոգորել, որևէ բուռն զգացմունք առաջացնել: 19. փխբ. Տանջել, չարչարել, տանջանք պատճառել:

Վարակել, նբ. 4. փխբ. Իր զգացմունքը՝ ապրումները հաղորդել՝ փոխանցել մեկին, իր մտքերով՝ զգացմունքներով՝ գաղափարներով տոգորել՝ համակել մեկին՝ մի բան: *Ռոմանոս Մելիքյանն իր ոգևորությամբ վարակում էր նույնիսկ ամենաթուևդ սկեպտիկներին (ՄՀ)*: 6. փխբ. Թունավորել, վատ ներգործություն՝ ազդեցություն գործել:

Այս առումով հետաքրքիր է **վարակիչ** (ած. 3-րդ փխբ. իմաստով՝ լավ կամ վատ ազդեցություն գործող, այս կամ այն ներգործությունն ունեցող) գլխաբանի իմաստի բացատրությունը, որի հակադիր իմաստները տրված են «կամ» շաղկապով:

Վիրավորել, նբ. 1. Վերք հասցնել (խոցելով, հարվածելով, գնդակով ևն): 2. փխբ. Խոցել, խոր վիշտ պատճառել: 4. Վիրավորանք պատճառել, վիրավորական արարքով՝ խոսքով, վերաբերմունքով վշտացնել՝ հոգեկան ցավ պատճառել:

Հեզնանք, արհամարհանք արտահայտող բառեր

Հեզնանքի, արհամարհանքի ու ծաղրի միջոցով արտահայտվող ներհակափոխ թառերը 6-ն են:

Ամենագետ, ած. ամեն բան գիտեցող՝ իմացող, համակողմանի գիտելիքներ ունեցող և հեզն. իրեն ամեն բան իմացողի տեղ դնող:

Իշխանիկ, գ. 1. Նվազ.-փոքր. Իշխան-ի: Փոքրիկ իշխան, դեռահաս իշխան: 2. (արհմրհ.): Փոքրիկ իշխան, չնչին իշխանություն ունեցող՝ թույլ՝ աննշան իշխան:

Մարդուկ, գ. 1. Նվազ. Մարդ-ի: 2. Նվաստ. Մարդ-ի: Խեղճ՝ աննշան՝ չնչին մարդ:

Վարժապետ, գ. 1. (հնց.): Ուսուցիչ: 2. (ծաղր.): Հետամնաց՝ գիտելիքներից ու մանկավարժական հմտությունից զուրկ ուսուցիչ:

Ուհի, 1. Իզականակերտ ածանց: 2. (խսկց. կտկ.): Իզական սեռին պատկանող անձ (կին կամ աղջիկ): 3. (ծաղր.): Կնաբարո տղամարդ:

Փիլիսոփայել, չբ. 1. Փիլիսոփայական հարցերի մասին դատողություններ անել: 2. փխբ. (հեզն.): Իմաստակել, իրեն գիտունի տեղ դնելով իմաստակել, գլխին զոռ տալ: 3. փխբ. Մառը՝ կրքերի ու ապրումների անմիջական ազդեցությունների չենթարկվելով դատողություն(ներ) անել, սառնորեն դատել՝ կշռադատել:

Քննարկում

Օրինակների բազմազանությունն ու առատությունը ցույց են տալիս, որ ներհակափոխություն պարունակող բառերը հայերենի բառապաշարում շատ են, իսկ դրանց խմբավորումն ու դասակարգումն արվել է՝ հաշվի առնելով այլ լեզուների համար կատարված դասակարգումները, սակայն որոշ դասդասումներ հեղինակային են և օբյեկտի ուսումնասիրության արդյունքից բխած անհրաժեշտություն:

Իհարկե, պետք է նշել, որ ուսումնասիրության հիմք ծառայած բառարանը բավականին հին է, և այնտեղ ներկայացված շատ իմաստներ կա՛մ փոխվել են, կա՛մ էլ գործածական չեն, ինչպես բառարանի կազմման ժամանակ (որոշ ի-

մասսներ ունեն «հնացած» նշումը), առավել ևս հիմա: Ավելին, այնտեղ ներկայացված են նաև արևմտահայերենից վերցրած իմաստներ, որոնք կարող են հակադիր իմաստ ունենալ արևելահայերենի միևնույն բառի արտահայտած իմաստին: Հոդվածի նյութը հիմնվել է բառարանում նշված իմաստների վերլուծության վրա:

Հարկ է ընդգծել նաև, որ հոդվածում տեղ չեն գտել այն իմաստները, որոնք ժամանակակից հայերենում հակադիր կամ հակառակ իմաստով են գործածվում, սակայն համարվում են սխալ կամ ոչ հանձնարարելի, օր.՝ *այլևս, հակամետ, մեղանչել* և այլն:

Լեզվի կոմիտեն իր ֆեյսբուքյան էջում անդրադարձել է այս բառերին՝ հորդորելով գործածել օրինակ, *այլևս* բառը միայն ժխտական իմաստով², իսկ *մեղանչելը*՝ բառարանում գրանցված «մեղք՝ հանցանք գործել», այլ ոչ թե «մեղազալ, զոջալ» իմաստներով³: Հետաքրքիր է նաև *հակամետ* բառի դեպքը. խոսակցական հայերենում այն գործածվում է բառարանում գրանցված իմաստի հակադիր իմաստով (Абрамян, Каджберуни, 2001: 82), իսկ Լեզվի կոմիտեն նշում է, որ «հակամետ» նշանակում է «մի բանի տրամադիր, մի բանի կողմը հակված, տրամադիր», և այն չպետք է շփոթել «հակառակ»-ի, «ներհակ»-ի հետ, և հիշել, որ նրա հոմանիշներն են «համաձայն»-ը, «տրամադիր»-ը⁴: Մեկ այլ հետաքրքիր օրինակ է *հանգանակել* բառը, որը, ըստ բառարանի, նշանակում է «հանգանակ՝ նվիրատվություն հավաքել որևէ նպատակի համար», սակայն նկատվում է նաև «նվիրատվություն կատարել» իմաստով գործածությունը⁵: Ընդ որում, էլեկտրոնային armdict.com բառարանը *հանգանակել* բառի համար տալիս է վերոնշյալ իմաստների անգլերեն թարգմանությունը, այսինքն՝ նվիրատվություն կատարել և նվիրատվություն հավաքել (to give, donate, collect, raise money)⁶: Ուշագրավ է նաև *համբավ* բառը. այն բառարանում ունի «բարի անուն, հռչակ» իմաստը, սակայն ժամանակի ընթացքում սկսել են գործածել ավելի շատ չեզոք իմաստով, և իմաստը հստակեցնելու համար գործածում են լավ կամ վատ ածականները՝ *լավ համբավ, վատ համբավ ունենալ*:

Բնականաբար, գոյություն ունեն լեզվական նորմ և կանոնակարգություն, սակայն հարց է առաջանում. արդյոք լեզվաբանները պետք է գրանցեն լեզ-

² <https://www.facebook.com/photo/?fbid=361057831135058&set=a.277843909456451> ղիտված՝ 05.12.2024թ.

³ <https://www.facebook.com/photo/?fbid=326637504577091&set=a.277843909456451> ղիտված՝ 08.12.2024թ.

⁴ <https://www.facebook.com/photo/?fbid=335224927051682&set=a.277843909456451> ղիտված՝ 01.12.2024թ.

⁵ <https://meliksetyan.org/hanganakel/> ղիտված՝ 09.12.2024թ.

⁶ <https://www.armdict.com/dictionary/armenian-english/%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A3%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A5%D5%AC?lang=ru> ղիտված՝ 08.12.2024թ.

վում տեղի ունեցող փոփոխությունները, թե՞ լեզուն գործածողներին հորդորեն հետևել տասնամյակներ առաջ գրված և փոփոխության չենթարկված բառարանում գրանցված իմաստներին: Երևի թե պետք է ներհականիշության երևույթի համար բացառություն կատարել և գրանցել որպես իմաստի բեռացում:

Եզրակացություն

Ներհականիշությունը քիչ ուսումնասիրված երևույթ է, և առավել քիչ են հետազոտված դրա առաջացման, զարգացման պատճառները և ուղիները: Թեև տարբեր լեզուների նյութի հիման վրա կատարվել են մի շարք հետազոտություններ, սակայն հայերենի բառապաշարին վերաբերող համապարփակ ուսումնասիրություն, կարելի է ասել, չկա:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրված ներհականիշները ընդգրկվել են *լրիվ, մասնակի հակադրություն, փոխանունություն, կին – տղամարդ, հոգեկան – ֆիզիկական հակադրություն*, ինչպես նաև *հեզնանք, արհամարհանք* խմբերում:

Հետազոտության արդյունքը ցույց է տալիս, որ լրիվ հակադրություն ունեցող բառերը շատ են, սակայն առավել շատ են փոխանունության խմբում ներառված ներհականիշները, որից պետք է առանձնացնել **-ծին** վերջնաբաղադրիչով բառերը, որոնք 39-ն են:

Ներհականիշության առաջացման աղբյուրները թեև հստակ չեն, սակայն կարելի է ասել, որ գոնե հայերենում այն կարող է առաջանալ նաև բառի սխալ գործածության հետևանքով:

Բառարանագրության տեսանկյունից առավել «խնայողական» կլինեն, որ որոշ իմաստներ ոչ թե առանձին համարակալվեր, այլ տրվեր մեկ իմաստի ներքո, ինչպես արվել էր օր.՝ *քարասպան* գլխաբառի համար:

Ներհականիշության ուսումնասիրության զարգացման համար առավել հետաքրքիր կլինեն դրանց առաջացման, ժամանակի ընթացքում բառերի իմաստների փոփոխության, համատեքստային ներհականիշության, բարբառների և այլ լեզուների հետ զուգադրական ուսումնասիրությունները:

МКРТЫЧ МКРТЧЯН – Энантиосемия в армянской лексике. – Энантиосемия — языковое явление, когда одно значение одного и того же слова противоречит другому. Это явление в разной степени присутствует практически во всех языках, хотя четких данных о его возникновении и развитии нет. Исследования энантиосемии проводились на материале одной языковой семьи, одного языка или проводился сравнительный анализ на материале разных языков. В языкознании нет единого подхода к пониманию, описанию и классификации энантиосемии. Проявления энантиосемии на материале армянского языка до сих пор не изучались, и данная статья является первой попыткой восполнить этот пробел. В статье дается определения явления «энантиосемия» в лингвистической литературе, а затем с помощью описательного метода слова с энантиосемией из «Толкового словаря современного армянского языка» Эд. Агаяна классифицируются на различные группы. Статья значима не только в том смысле, что впервые на армянском материале

выявляются слова с внутренними антонимами, но и потому, что материал статьи может быть использован в преподавании армянского языка, лексикографии, сопоставительном изучении армянского и других языков.

Ключевые слова: энантиосемия, контроним, лексикография, семантическая вариация, оппозиция.

ՄԿՐՏԻՇ ՄԿՐՏԻՇՅԱՆ – Enantiosemy in Armenian Vocabulary. – Enantiosemy is a linguistic phenomenon when one meaning of the same word contradicts another. This phenomenon is present in almost all languages to varying degrees, although there is no clear record of its emergence and development. Studies on enantiosemy have been conducted using the material of the same language family, one language, or comparative analyses have been carried out on the material of different languages. In linguistics, there is no unified approach to understanding, describing, and classifying enantiosemy. The manifestations of enantiosemy have not yet been studied based on the material of the Armenian language, and this article is a unique attempt to fill this gap. The article begins by defining the phenomenon of “enantiosemy” in linguistic literature and then uses the descriptive method to classify words with enantiosemy from Ed. Aghayan’s “Explanatory Dictionary of Modern Armenian” into different groups. The article is significant not only in the sense that, for the first time, words with internal antonyms are identified using Armenian material but also because the material in the article can be used in the future in the teaching of Armenian, lexicography, and comparative studies of Armenian and other languages.

Key words: enantiosemy, contronym, lexicography, semantic variation, opposition.

Գրականության ցանկ

- Աղայան, Է. Բ. (1976): *Արդի հայերենի բացատրական բառարան*, Երևան: «Հայաստան» հրատ.: (Aghayan, E. B. (1976), *Ardi hayereni batsarakan barraran*, Yerevan: ‘Hayastan’ hrataran).
- Բենվենիստ, Է. (2023): *Ընդհանուր լեզվաբանության խնդիրներ*, I. Երևան: Սարգիս Խաչենց, Փրիթինֆո: (Benvenist, E. (2023), *Yntanur lezvananutyan khndirner*, I. Yerevan: Sargis Khachents, Printinfo).
- Մարգարյան, Ալ. (1987): *Հայոց լեզվի հականիշները*, Երևան: «Լույս» հրատ.: (Margaryan, Al. (1987), *Hayots lezvi hakanishner*, Yerevan: ‘Luys’ hrataran).
- Նազարյան, Ա. (1993): *Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-հայերեն-ռուսերեն ուսումնական բառարան*, Երևան: Ապոլլոն: (Nazaryan, A. (1993), *Lezvanakan terminneri franseren-hayeren-ruseren usumnakan barraran*, Yerevan: Apollon).
- Շալունց, Ռ., (1979): *Հականիշ բառերը ժամանակակից հայերենում*, Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: (Shalunts, R. (1979), *Hakanish barery zhamanakakanch hayerenum*, Yerevan: HSSH GA hrataran).
- Քաջբերունի, Հ., Հակոբյան, Թ. (2016): Ներհականիշության խնդրի շուրջ, *ԿԱՆԹԵԴ. Գիտական հոդվածներ*, 66 (1), էջ 43–51: (Kajberuni, H., Hakobyan, T. (2016). *Nezhakanishutyan khndri shurj*, KANTEGH. *Gitakan hadvatsner*, 66(1), ej. 43–51).
- Абрамян, К., Кадзберуни, А. (2001). Энантиосемия: Истоки, основная проблематика. *ԿԱՆԹԵԴ. Գիտական հոդվածների ժողովածու*, 51 (2), էջ 79–87. Abramyan, K., Kadzhberuni, A. (2001). Enantiosemya: Istoki, osnova problematika. KANTEGH. *Gitakan hadvatsneri zhoghovatsuy*, 2, ej. 79–87.
- Авдеева, М. Д., Ярославцева, Е. Ф., Гарасва, М. В. (2019). Лексическая энантиосемия как языковой аспект категории контрарности (на материале германских и славянских языковых групп), *Philology. Theory & Practice*, 12(8), с. 226–232. doi:

- 10.30853/filnauki.2019.8.44. (Avdeeva, M. D., Yaroslavtseva, E. F., Garaeva, M. V. (2019). Leksicheskaya enantiosemya kak yazykovoy aspekt kategorii kontrarnosti (na materiale germanskikh i slavyanskikh yazykovykh grup), *Philology. Theory & Practice*, 12(8), s. 226–232. doi: 10.30853/filnauki.2019.8.44).
- Виноградов, В. В. (1975). Об омонимии и смежных явлениях, *Избранные труды: исследования по русской грамматике*. Москва: Москва Наука, с. 295–314. (Vinogradov, V. V. (1975). Ob omonimii i smezhnykh yavleniyakh, *Izbrannye trudy: issledovaniya po russkoy grammatike*. Moskva: Moskva Nauka, s. 295–314).
- Горелов, И. Н. (1986). Энантioseмия как столкновение противоречивых тенденций языкового развития, *Вопросы языкознания*, (6), с. 86–93. (Gorelov, I. N. (1986). Enantiosemya kak stolknoveniye protivorechivyykh tendentsiy yazykovogo razvitiya, *Voprosy yazykovedeniya*, (6), s. 86–93).
- Кравцова, В. Ю. (2006). Критерии классификации лексической энантioseмии и ее типы, *Общественные науки*, (S9), с. 82–90. (Kravtsova, V. Yu. (2006). Kriterii klassifikatsii leksicheskoy enantiosemyi i yeye tipy, *Obshchestvennye nauki*, (S9), s. 82–90).
- Никульникова, Я. С., Александрович, Л. В., Севастьянова, В. А. (2021). Энантioseмия как особая лексико-семантическая категория лексического яруса современного русского языка, *МИР НАУКИ, КУЛЬТУРЫ, ОБРАЗОВАНИЯ*, 27(2), с. 511–513. (Nikulnikova, Ya. S., Aleksandrovič, L. V., Sevastyanova, V. A. (2021). Enantiosemya kak osobaya leksiko-semanticheskaya kategoriya leksicheskogo yarusy sovremennogo russkogo yazyka, *MIR NAYKI, KULTURY, OBRADOVANIYA*, 27(2), s. 511–513).
- Новиков, Л. (1982). *Семантика русского слова*. Москва: «Высшая школа». (Novikov, L. (1982). *Semantika russkogo slova*. Moskva: 'Vysshaya shkola').
- Степанов, Г. В., Крысин, Л. П., Земская, Е. А. (1984). *Энциклопедический словарь юного лингвиста*. Edited by М. В. Панов. Москва: Педагогика. (Stepanov, G. V., Krysyn, L. P., Zemskaya, E. A. (1984). *Entsiklopedicheskiy slovar' yunogo lingvista*. Edited by M. V. Panov. Moskva: Pedagogika).
- Barthes, R. (1982). 'L'esprit de la lettre', in *Essais de critiques III- L'Obvie et l'obtus*. Paris: Ed. du Seuil, pp. 89–92.
- Claude, H. (1985). *L'Homme de paroles*. Paris: Fayard.
- Larue-Tondeur, J. (2009). *Ambivalence et énantiosémie (Thèse de doctorat)*. Paris: Université de Nanterre - Paris X.
- Matthews, P. (2014). *The Concise Oxford Dictionary of Linguistics*. Oxford: Oxford University Press.
- Shmelev, A. (2016). 'Semantic shifts as sources of enantiosemy', in Juvonen, P. and Koptjevskaja-Tamm, M. (eds) *The Lexical Typology of Semantic Shifts*. Berlin, Boston: De Gruyter, pp. 67–94. doi: 10.1515/9783110377675-003.
- Velmezova, E. (2007). *Les lois du sens: La sémantique marriste*. Verlag Peter Lang.